

15537



Ի. ԿՈՒԼԻԿ

Պ ԱՐՏՈՒԹՅՈՒՆ

891.79

4-91

Մ ԵՐԵՎԱՆ 1935

S. A. DE 2019



29.05.2013

15537

25 SEP 200

9 NOV 2010

89679  
4-91

Ի. ԿՈՒԼԻԿ

48

# ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՊՈՏՈՍԻ ՀՈՒՇՈՏԵՏՐԻՑ

Ուկրաինայի բարձրագույն  
Մ. ԴԱՐՄԱՆՆԱՆ

3976<sup>1008</sup>  
36873

4634

100



Հ Ր Ս Ս Մ Ր Ս Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1 9 3 5

4634

Պատ. խմբ. Ռ. Արայան  
Տեխ. խմբ. Տ. Խաչվանյան  
Սրբազրիչ Ա. Ծախազյան

Գեոհրատի տպարան  
Գլավ. խմբ. 261, Պատվեր 868  
Հրատ. 3381, Տիրամ 2000

— Ապա՛, ապա՛, ե՛լի ինչ սրամիտ բան են հնարել  
անսուրխիստները...

Հարց սովի հենց այնպես, պարսպուկությունից, քա-  
նի վոր, ճիշտն ասած, դա այնքան ել չեղ հետաքրք-  
բերում ինձ: Եմիգրանտական մամուլն արդեն կորց-  
րել եր ինձ համար ամեն մի նշանակություն և յես  
նախնիակ զազարել էյի նրան հետևելուց: Խորհրդա-  
յին Միության դեմ ուղղված հարձակումներն այդ  
մամուլում ամեն որ նույնն էյին, միտքինակ: Անար-  
խիստական այդ «բասավետ» կոչվող թերթում:

Գիտեյի, վոր այդ թերթը հրատարակում են մի  
չանի սպիտակ սպաներ, վորոնք Պոլսից յեկել էյին  
Զիկագո և այնտեղ «մասսայականանալու» կուրս ըն-  
դունելով— իրենց հայտարարել էյին «անարխիստ-  
ներ»: Նրանց «անարխիզմը» կայանում եր նրանում,  
վոր սխառեմատիկաբար հայհոյում էյին մեզ: Բայց  
դրանով շուրջը մասսա չես համարվարի: Բանի վոր

Նրանց հայհոյանքը չէր տարբերվում սպիտակ-գլխար-  
դիակահանների հայհոյանքներից, նրանց թերթերը կար-  
դալն էր հետաքրքիր չէր: Ըստ յերևույթին իրենց,  
անարխիստներին ևս ձանձրացրել էր բուլլեիկներին մա-  
սին նորանոր անեկդոտներ հնարելը և նրանք կամ  
կրկնում էին միևնույնը, վորով նրանց այդ արվես-  
տը դադարել էր տպավորութուն գործելուց, կամ  
հայհոյում էին այնքան տաղտկալի, սիրտ խառնելու  
չափ զգվելի, վոր ամենքին պարզ էր, թե նրանք ի-  
րենց «գործը» կատարում են իբր պարտավորու-  
թյուն, առանց վորևե ներշնչման: Առաջիկ ևս, վոր  
մենք վոչ մի ուշադրության չեցինք արժանացնում այդ  
հայհոյանքները և դրանով զրկում էինք նրանց բանա-  
վեճի բավականութունից:

Այս անգամ Բուլլազակովի տեսքն ավելի լուրջ և  
ուշադրալ էր, յերբ նա լուռ մեկնեց ինձ լրագիրը,  
կապույտ մատիտով ընդգծած փոքրիկ հորվածով:  
Վերնագիրը վոչ մի յուրահատուկ բան չէր խոստա-  
նում—«Բուլլեիկների մի դոհ ևս»: Այնուամենայնիվ  
ուշադրությամբ կարդացի: Հողվածում խոսվում էր  
այն մասին, թե մեզնից վոչ այնքան հեռու Տիմֆինս-  
քաղաքում մահվան է դատապարտված մի հայ բան-  
տարկյալ, վոմն Գևորգ Առաքելյան:

Այնքան էլ պարզ չէր, թե ինչու նա «բուլլեիկյան»  
դոհ է համարվում, սակայն, այդ շրջանի իշխանու-  
թյունը կամենում էր Առաքելյանին կախել: Առաքել-  
յանը բուլլեիկյան դոհ համարելն այնպիսի հիմարու-  
թյուն էր, վոր այդ իրենց չեցին կարող թույլ տալ  
մինչև իսկ Պորից յեկած «անարխիստները»: Թերթը  
չատ աղոտ ակնարկում էր, թե «բուլլեիկյան ագիտա-

ցիան» Առաքելյանին հասցրել է մինչև վոճրագործու-  
թյուն, վորի համար նրան մահվան դատալծիո էր  
սպառնում:

Ինչ էլ լիներ, հողվածն արժանի յեր ուշադրու-  
թյան: Այլեյին: Նա մեզնից պահանջում էր անմիջա-  
պես գործի դիմել: Խոսվում էր մեր խորհրդային քա-  
ղաքացու մասին:

— Յերեւակայեք, վոր կարող են կարծել, թե այդ  
բանն իմանում ենք Ձիկադոյի թերթից,— ընդգծեց  
Բուլլազակովը:

— Այո, դա անպայման աննորմալ է: Անհրաժեշտ  
և անմիջապես սկսել... իսկույն կանչեցեք Հարբըրին  
և գտեք Առաքելյանի գործը:

— Իսկույն: Հարբըրն այստեղ կլինի տասնհինգ  
րոպեյից, իսկ գործը— ահավասիկ:

Ուշադրությամբ կարդացի գործը: Առաքելյանից  
վերջին նամակն ստացված է մոտավորապես մի ամիս  
առաջ: Ինձ դարմացնում էր այն, թե ինչու յե լուռ  
Առաքելյանը, իսկ այստեղ, ինչպես տեսնում եք, ա-  
նարխիստներն են խառնվում գործին:

Բուլլազակովը վերցրեց պորտֆելը, շտապեց իր  
առանձնասենյակը, վորպեսզի վորևե ակնարկ զանի  
Առաքելյանի վոճրագործության վիրաբերյալ:

Ահա Առաքելյանին վերաբերող ամբողջ նյութը—  
ինքնակենսագրությունը, անկետան, հայտարարու-  
թյան պատճենը, վորով ցանկություն է հայտնում  
խորհրդային քաղաքացի ընդունվելու, Արտգործող-  
կոմատի հետ ունեցած զրազրությունը, վերջապես  
ստացված պատասխանը, վոր Գևորգ Առաքելյանը զի-  
տարեկան է, ծնվել է Ալեքսանդրոպոլում (Լենինս-

կան), արձանագրված է, վորպես ԽՍՀՄ քաղաքացի, և վոր նրան իրավունք է տրված վերադառնալու Խորհրդային Հայաստան: Դարձյալ վկայական Տիմֆինսի դավանական բանտից, Առաքելյանի նամակը բանտային կնիքներով կնքված: Սակայն այս ամենը չի պարզում գործի ելուձյունը. ընդհակառակը, ավելի խճճում է այն, քանի վոր մի ամիս առաջ գրված նամակը հաղորդում է, թե Առաքելյանի բանտից ազատ արձակելուն մնում է ընդամենը ինչ-վոր յերկու շաբաթ և վոր նրան հնարավորություն են տալիս քաղաքում աշխատելու— վերակացուի հսկողություն տակ: Այս ամենն ուշադրութեամբ կարդալուց բան չի դուրս չտալիս: Գուցե մինչև Հարրերի գալը վոչինչ չկարողանանք իմանալ:



Գևորգ Առաքելյանի պատմությունը միանգամայն սովորական է այս յերկրի համար. և նման գործեր քիչ չեն մեզ մոտ:

Բսանհինդ տարի առաջ Գևորգը գաղթել է այստեղ, ովկիանոսի այս կողմը: Այն ժամանակ նա դեռևս պատանի յեր, քաղաքականությունից բան չեր հասկանում. ասենք, այստեղ էլ նա խուսափում էր դրանից: Տանից ստացված նամակներից դիտեր միայն, վոր պատերազմն ակավելուն պես նորից սկսել են հայերին կոտորել և նրա ամբողջ ընտանիքն ստիպված է յեղել փախչել դեպի Հյուսիս. իսկ յերբ հեղափոխություն է առաջացել, ցարին տապալել են, այն ժամանակ միայն ընտանիքը վերադարձել է Ալեքսոլ: Այդ ժա-

մանակամ իջոցում նրա ընտանիքը ծանր կարիքի մեջ է յեղել, մուրացկանութեան դուռն է հասել և Գևորգն ողնել է նրան, մի քիչ դրամ է ուղարկել, թեև ինքն էլ այնքան շատ չեր վաստակում և հաճախ մնում էր առանց աշխատանքի:

Այնուհետև միանգամից ընդհատվում է նամակագրութունը: Գևորգը կորցնում է կապն իր ընտանիքի հետ:

Վո՞րտեղից գտնի նա իր ընտանիքը, իր հարազատներին...

Գևորգը դադարում է դրամ ուղարկելուց և ձեռք ընկած դրամը պահ է տալիս բանկին, վորպեսզի հավաքի և վերադառնա հայրենիք:

Առաքելյանն անդերին այնքան էլ լավ չսովորեց, յերկար տարիներ ապրելով այս յիւրերում, այդ պատճառով էլ իր համար հայկական բանկ դուռով, վոր փողերը պահ տա: Սա էլ բանկ չեր, այլ՝ այնպես, միջնորդ գրասենյակ, վոր արժեթղթեր եր վաճառում, դրամ եր մանրացնում կամ փոխադրում, իսկ տոկոսներ վճարում եր վոչ պակաս քան խոշոր բանկերը: Գրասենյակ-բանկը պատկանում էր վոմն Բեֆչյանցի:

Բեֆչյանցին ունենալ թիկունքում, միևնույնն է, թե լեռ ունենալ մեջքին կանգնած, քանի վոր ինքը Բեֆչյանցը յերբեմնի բանվոր եր: Մի քիչ դրամ է վաստակել, քաց է արել դրասենյակ-բանկ, վոչ իր համար, վո՞չ, այլ այն հայերի, վորոնք լավ չգիտեն անդերին. այո՛, նրանց համար, վորպեսզի խեղճերին չխաբեն... Լինում են այդպիսի մորդիկ: Այսպես եր ասում Բեֆչյանցը, և ինչո՞ւ չպիտու հավատար նրան Գևորգը, ինչո՞ւ չպիտի վստահեր իր հայրենակցին:

Միայն մի բանում չեյին համաձայնում նրանք: Քեֆ-  
չյանցը դաշնակցական էր և յերեկոները նրա մոտ ե-  
յին հավաքվում դաշնակիները: Քեֆչյանցն Առաքել-  
յանին էլ էր հրավիրում իր մոտ.

— Ի՞նչ կլինի անցնես մեզ մոտ. մի քիչ կհամե-  
յինք, կխոսեյինք մեր հայրենիքի մասին, — ասում էր  
նա, իսկ Գևորգը նրան պատասխանում էր.

— Խմել, չեմ խմում, փող արժե, իսկ քաղաքա-  
կանությունն իմ խելքի բանը չե, թող նրանք քաղա-  
քականությամբ դրադվեն, ովքեր կոթված են:

Այսպես էլ չգնաց, թեև յերբեմն կամենում էր  
խմանալ, թե ինչ է կատարվում այնտեղ, հայրենի-  
քում, և ովքեր են այդ դաշնակիները: Յեկ նա չուտով  
խմացալ, թե ովքեր են դաշնակիները: Իմացալ այն  
նամակից, վոր դրել էյին իր հարստանները Ռոստո-  
վից: Իմացալ ու հասկացալ Գևորգը, և այդ յերեկո  
գնաց ժողովի, այն էլ — կոմունիստական ժողովի:

Այսպես պատահեց:

Առաքելյանի հարազատները հաղորդում էյին, թե  
նրանք Ալեքսանդրում չեն, այլ ստիպված յեղան փախ-  
չելու Ռոստով, քանի վոր Հայաստանում դաշնակիներն  
են (ասում են, նրանք վաղուց են յեղել այնտեղ),  
վորոնք դեմ են բանվորա-գյուղացիական իշխանու-  
թյանը: Հրավիրել են օտարերկրյա զորքեր, — անգ-  
լիացիներին, — և նորից սկսվել է կոտորածը: Չքա-  
վոր մարդը կյանք ու ապրուստ չունի, չգիտես թե  
գլուխդ ուր դնես, ուր փախչես. հանգիստ տեղ չկա:  
Առայժմ կանգ են առել Ռոստովում, բայց այստեղ էլ  
յերեկ հանդիստ կյանք չեն ունեցել, վորովհետև այս-  
տեղ էլ են հասել ավազակները:

Գևորգը շատ վշտացալ. ամբողջ օրն ու գիշերը  
մտածեց այդ նամակի բովանդակության վրա, իսկ  
առավոտյան վորոշեց գնալ Քեֆչյանցի մոտ և վերց-  
նել իր դրամները, քանի վոր, կնշանակի, չքավոր  
մարդը չպետք է վստահի դաշնակիներին:

Քեֆչյանցի գրասենյակի դռան վրա կողպեք էր  
կախված, իսկ լուսամուտին կպցրած էր մի հայտա-  
բարություն անգլերեն ու հայերեն լեզուներով, թե՛  
Քեֆչյանցին պահ տված մարդկանց, ուրեմն՝ և Գևոր-  
գի, դրամները կորել են, վորովհետև «բանկը», վո-  
րին պահ տված է յեղել Քեֆչյանցն իր գումարները,  
սնանկացել է:

— Հիմի ի՞նչ է լինելու, — հարց տվեց Առաքել-  
յանը, չհասկանալով բանի ելությունը:

Մի քանի հոգի ծիծաղեցին Առաքելյանի և մյուս  
մարդկանց միաստուլթյան վրա. Առաքելյանի նման  
մարդիկ շատ կային: Նրանք հավաքվել էյին Քեֆ-  
չյանցի գրասենյակի շուրջը և հուսահատ ու դայրա-  
ցած խոսում էյին: Հետո նրանք կատաղած սկսեցին  
միասին գոռալ:

— Ո՞ւր են այդ բանկիրները, մենք նրանց կտոր-  
կտոր կանենք:

Վոչ վոք իհարկե, նրանց ձեռքը չովեց բանկիր-  
ներին, սակայն, չուտով ձեռք-ձեռք անցան թերթիկ-  
ներ — դանադան լեզուներով: Այդ թերթիկները իրենց  
խնայած դրամները կորցրած աշխատավորներին հրա-  
վիրում էյին «բանկի» սնանկության առիթով, կո-  
մունիստական կուսակցության տեղական կազմակեր-  
պության գումարած ժողովին: Կուսակցությունն այն  
ժամանակ դեռևս լեզալ էր: Շատ ժողովուրդ էր հա-

վաքվել այդ որվա ժողովին: Գնաց նաև Գևորգ Ա-  
ռաքելյանը, թեև այնքան ել լավ չգիտեր, թե դա ինչ  
ժողով է: Այս անդամ նա մինչև իսկ չմտածեց, վոր  
քաղաքականութունն իր խելքի բանը չէ, քանի վոր  
լ'նչ քաղաքականության հարց կա այստեղ, յերբ խեղճ  
մարդու գրամը կողոպտում են:

Ժողովում շատերը խոսեցին: Դուրս յեկավ և մի  
հայ, վորը խոսեց վոչ միայն դրամի, այլև հայրենի-  
քի, բանվորա-գյուղացիական իշխանության և դաշ-  
նակների մասին: Նա պատմեց, թե ինչպես դաշնակ-  
ները տանջում են թշվառ ժողովրդին և Հայաստան են  
հրավիրել ստարերկրյա ավազակներին:

Այն ժամանակ հայերը նորից գոչեցին.

— Տվե՛ք մեզ այդ կողոպտիչներին և դաշնակնե-  
րին: Մեր ձեռքը սվեք Բեֆչյանցին, թող գա, մենք  
նրան կտոր-կտոր կանենք:

Յեւ իրոք Բեֆչյանցն յեկավ, բայց վոչ միայնակ,  
այլ ժանդարմների՝ «մառնետեղ-պոլիս»-ի<sup>\*)</sup> հետ  
միասին, իսկ սրանք կալանավորեցին ժողովականնե-  
րից շատերին: Տարան և Գևորգ Առաքելյանին: Հա-  
սավ ժամանակը, յերբ այդ դամիսիոնի կառավարու-  
թյունը վորոշեց մի հարվածով վոչնչացնել բոլոր  
«կարմիրներին»: Ըստարքի յենթարկիցին կոմկու-  
սակցությունը և ամբողջ եմիգրանտական բանվորա-  
կան կազմակերպությունները: Մեթոքը շատ հասա-  
րակ էր: Հեծյալ վոստիկանությունը չըջտպտում էր  
այն շենքերը, ուր տեղավորված էյին կազմակերպու-  
թյունները և տեղի էյին ունենում ժողովները, կալա-  
նավորում էր բոլոր ներկա յեղողներին և քլում մո-

\*) Հեծյալ վոստիկանություն:

տակա վոստիկանական վարչությունը: Այնտեղ բա-  
ժանում էյին իրենց քաղաքացիներին և մինչև դատա-  
վարությունը բանտարկում:

Յուրայինների հետ բանը դժվար է, մինչև ան-  
գամ պարլամենտը կարող է խառնվել գործին: Չե վոր  
հայտնի չէ, վոր «նույնիսկ բրիտանական թագի հպա-  
տակը— անառիկ ամբոց է»: Յուրայինների հետ պետք  
է քիչ զգուշ լինել:

Իսկ եմիգրանտներին ուղղակի տանջալից հարցա-  
քննության յենթարկեցին, ձեծեցին ռետին մահակ-  
ներով, նստեցրին ապրանքատար վագոնները և տա-  
րան:

Հարցաքննեցին և Գևորգ Առաքելյանին:

— Դու, հոտած հայ, ասել ես կտոր-կտոր կա-  
նես մեր յերկրի քաղաքացիներին,— գոռաց Գևորգի  
վրա սերժանտը (—սերժանտը շատ էր հոգնել: Գևոր-  
գը քննության յենթարկվողներից համարյա հինգհա-  
րյուրերորդն էր: Սերժանտի գլխից ու դեմքից հո-  
սում էր քրտինքը. այն ծորում էր նույնիսկ վղից ու  
թրջում սերժանտի նոր ոձիքը):

— Ճիշտ այդպես,— պատասխանեց Առաքելյա-  
նը,— ինձ մոտ բերեք այդ Բեֆչյանցին և յես, իրոք,  
կպատուտեմ նրան, վորովհետև նա ինձ կողոպտել է,  
հախալակել է վողերս:

Սերժանտը մտրակով զարկեց Գևորգի մեջքին,  
հրեց դեպի դուրս և կանչեց.

— Պրինց—Եղվարդս այլե՞նդ<sup>\*)</sup>:

Յեւ Գևորգ Առաքելյանին իսկույն, մյուսների  
հետ միասին, տարան ամենամոտ նավահանգիստը, իսկ

\*) Իշխան Եղվարդի կղզին:



այնտեղից ուղարկվեցին Պրինց Եղվարդի կղզին, սակայն դեռ կայսրան չհասած, զնացքը կանգնեցրին ու մտցրին փակուղի. հետո փշալարներով ցանկապատեցին վազոնները և հայտնեցին պահակներին, թե կալանավորներն այդպես բանտարկված պետք է մնան:

Ձմեռ էր. խիստ սառնամանիք. ցերեկով կարելի էր տաքանալ միայն պահակի խցիկի մոտ, իսկ գիշերը... Գիշերում էլին այդ նույն վազոններում, իսկ այնտեղ կրակ անելն արգելված էր: Պահակներն տաք սենյակ ունեյին:

Ցերեկով կալանավորներին քշում էլին յերկաթդժի վրա աշխատելու: Նրանց թիփն որեց-որ պակասում էր, քանի վոր կերակրում էլին որական յերկու անգամ, տալիս էլին սուրճ և ապուր, իսկ դրսից վորևէ բան ստանալն արգելված էր, յեթե մինչև անգամ բերող լիներ:

Կալանավորների մի մասը մրսեց ու մահացավ ցրտից, իսկ մյուսները յերկու տարվա ընթացքում թոքախտ ու վոսկրացավ ստացան, հաշմանդամներ դարձան: Այսպիսով «կարմիրներին» վերացրին խրամբով: Սակայն Գևորգը յերկաթե առողջութուն ուներ. նա թեև սկսեց հազալ, բայց, այնուամենայնիվ, կազդուրվեց, և կարող էր դեռ ելի շատ անհանդատութուն պատճառել իշխանությանը, յեթե միայն ազատ արձակեյին: Այսպես էր մտածում իշխանութունը, մանավանդ, վոր կար հարցաքննության արձանագրութունը, վորտեղ ասված էր, թե Գևորգ Առաքելյանն սպառնացել է կտոր-կտոր անել այդ դամբնիոնի քաղաքացիներին և վոր, մինչև անգամ, այդ բանը չթաղցրել հարցաքննության ժամանակ: Այդ իսկ պատ-

ճառով նրան չազատեցին նույնիսկ, յերբ յերկու տարի իշխանութունը գոնջում էր ազատամիտ կուսակցության ձեռքում, այլ՝ մյուս, այլելի անվտանգ կալանավորների հետ միասին փոխադրեցին Տիմփինոի քաղաքային բանտը:

Առաքելյանն այդ բանտում նստեց դարձյալ յերկու տարի, իսկ յերբ այս յերկիրն յեկան մեր ներկայացուցիչները, ասացին, թե շուտով կվերջանա նրա բերդարգելության ժամանակամիջոցը և կարող են նրան աքսորել այդ դամբնիոնից, յեթե միայն ԽՍՀՄ համաձայնի վիրա (անցաթուղթ) տալ: Այնուհետև Գևորգ Առաքելյանն սկսում է իր գրադրութունը մեզ հետ, պահպանելով բոլոր անհրաժեշտ ձևականութունները՝ սպասելով վիրայի:

Հիշեցի նման «բանտային թղթակիցներին», վորոնք բավական շատ էլին: Նրանք բոլորն էլ իրենց նամակներում մոտավորապես նույն պատկերն էլին նկարադրում, ինչ Առաքելյանը:

Յեւ ահա, յերբ Առաքելյանին մնում է ընդամենը յերկու շաբաթ, վոր ազատագրվի և հնարավորութուն ունենա վերադառնալ Խորհրդային Հայաստան, յերբ նրան թողնում էլին, վոր քաղաքում աշխատի, նա, հանկարծ, նոր հանցանք է գործում, վորի համար նրան մահվան են դատապարտում:

— Վուչինչ չեմ հասկանում...

\*\*\*

Մնացածը պատմեց մեզ իրավարան միտքը Հարրըրը: Նա յեկավ, ինչպես միշտ, զվարթ ու կենսուրախ:

— Հետաքրքիր դործ ե, չե՞...

Ինձ հետախոստով հայտնեց միտորը Ֆուլգակովը և յես համաբեցի բոլոր վկայականները: Միայն թե ձեզ խորհուրդ չեմ տա խառնվել, դա անհուսալի դործ ե: Վերակացուին սպանելը... նշանակում և կախադանի թոկը պատրաստ ե:

Յեվ մ—ը Հարբըրն իր մարմնի շարժումներով դժադրեց, թե ինչպես են թոկը պցելու Առաքելյանի վիդր:

— Վերակացուին սպանե՞լ... Բայց դա անհավանակա՞ն և...:

— Այնուամենայնիվ փաստ ե: Սկզբում պետական իրերի գողութուն, հետո, այդ գողութունը ծածկելու նպատակով՝ վերակացուի սպանութուն:

— Սակայն, մ—ը Հարբըր, կարո՞ղ եք յերևակայել, վոր նորմալ մարդը, վորին/յերկու շաբաթից հետո ադատութուն և սպասում, ընդունակ լինի ֆոլգլիսի բաների: Յեվ ի՞նչ կարող եք գողանալ նա. հսկողության տակ գտնվելով:

— Գիտե՞ք, բուլչեիկները նորմալության մասին կարող եյի պատասխանել ձեզ մեր մամուլի լեզվով, բայց նախ՝ այդ բանը սրտախտ չեյիք համարի, յերկրորդ՝ Առաքելյանը բուլչեիկ չե, այդ լավ գիտեմ: Ինչ վերաբերում և գողությանը, այստեղ դործն այնքան ել պարզ չե. սակայն սպանութունը— գժբախտաբար փաստ և և, կարիք չկա ձեզ բացատրելու, վոր այս հանցագործութունն ավելի վատ և, քան գողութունը:

— Իսկ գրգապատճառնե՞րը, սպանության գըրգապատճառնե՞րը, մ—ը Հարբըր: Գուցե նրան խելա-

դարությա՞ն ևն հասցրել, գուցե ծաղր ու ծանակի յեն յենթարկել նրան: Ձեր տեղեկությունները լրիվ չեն: Իսկ մենք հնարավորութուն ունե՞նք լրիվ տեղեկություններ համաբեելու: Յե՞րբ են ուզում կախել նրան:

— Ութ շաբաթից հետո: Ճիշտ և, դաժանութուն և այդպես շուտ իրագործել վճիռը, հնարավորութուն չտալով մեղապարտին ինչպես պետք ե, զղջալու:

— Իսկ յեթե յերբևե զղջար, դա կոպնե՞ր նրա կյանքը փրկելուն:

— Մեր վստիքամած որենտգրութունը բացառի՛ հոգատարութուն և հայտարարում հանցագործի հոգու հանգեպ, նրա մահվան դատավճիռը հայտարարելուց մի քանի ամիս հետո: Գիտեք, դա շատ հանդիսավոր արարողութուն և, յերբ դատավորը, համաձայն բրիտանական հին ոխտուալի, հաղնում և «մահվան» դիմակը և վշտալից հայտարարում. «Թող քեզ, վորի անունն այսքան ու այսքան ամիս հիշատակում են, վերցնեն այնտեղից, ուր ապրել ես դու և տանեն այնտեղ, ուր կախում են մարդկանց և կախադան բարձրացնեն, մինչև վոր մեռնես, և թող աստված ընդունի քո մեղապարտ հոգին»: Շատ անուղղելի մեղապարտներ մինչև կախվելը բաշտականաչափ ժամանակ են ունեցել զղջալու, գեպի յերկինք են ուղղել իրենց աչքերն ու տանջվել կախադանի վրա իրբև յեկեղեցու հալատացյալ վորդիք: Իսկ ձեր կոմունիստ հայրենասերի նկատմամբ նման անարդարութուն... ի՞նչ բան և. ընդամենը ինչ—վոր ութ շաբաթ... Այդքան ժամանակամիջոցում մի՞թե կարելի յե շատ բան մտածել զղջալու համար...:

Գիչ մնաց Հարբըրին վիրավորելի, անսպասովելի

այդպիսի ցինիզմի համար, բայց ինձ դասեցի, գիտե-  
նալով, Վոր փորձված փաստարանի վրա այդ բանը  
չի աղբի: Նա բացահայտորեն հպարտանում էր այդ  
ցինիզմով...

Յես միմիայն կրկնեցի հարցս.

— Դուք ինձ չարատասխանեցիք, մ—ր Հարրըր. բա-  
վակա՞ն ժամանակ ունենք վորևե բան անելու Առաքել-  
յանին պաշտպանելու համար: Հողին ինձ ամենից քիչ  
և հետաքրքրում:

— Ասում եմ, վոր ժամանակը քիչ է: Իսկ դա  
փող արժե:

— Փող կգտնենք, մ—ր Հարրըր, չե՞ վոր մեր  
քաղաքացու կյանքը գերանից է կախված: Իսկ առայժմ  
հավաքենք հիմնական տեղեկություններ՝ հանցադո-  
ճություն պատկերը պարզելու համար:

\*\*\*

Յերկու շաբաթ, յերեսակայս՞ում էք, յերկու շա-  
բաթ, ճիշտ մեկ քառորդն այն ժամանակի, վոր մը-  
նում էր Առաքելյանին ապրելու: Մեր փաստարանը  
տեղեկություններ էր հավաքում: Բայց և այնպես  
պատկերը մեզ համար կատարելապես պարզ էր:

Ճիշտ է, այս բանում միմիայն Հարրըրին չենք  
պարտական: Բուլգակովը փայլուն միտք հղացավ.

— Չե՞ վոր Առաքելյանը մենակ չի յեղել, յերբ  
այդ ամենը տեղի յե ունեցել: Կարևորությունների մեջ,  
վորոնք նրա հետ միասին աշխատելիս են յեղել,  
Նույնպես կարող է եմիգրանտ յեղած լինել, գուցե և  
հայ: Ի՞նչպես գտնենք:

— Հիանալի յե, Բուլգակով, դա շատ բան կտա  
մեզ: Ի՞նչ էք կարծում, մ—ր Հարրըր:

Փաստարանը չէր սիրում, յերբ խառնվում էին  
նրա գործերին:

— Կարելի յե, իսկապես հնարավոր է գտնել,—  
դժկամակույթյամբ համաձայնվեց նա,— միայն թե  
քաղաք աշխատանքի էլին թողնում բացառապես  
Նրանց, վորոնք պետք է շուտով ազատվեյին բանտից:  
Դե, այժմ փորձեցեք գտնել, թե վո՞րն է յեղել նրան-  
ցից...

— Արդեն գտել եմ (նման էեպեքրում Բուլ-  
գակովին աներևակայելի համեստ տեսք էր տալիս իր  
դեմքին): Վաչե Մինգիրյան. այսօր պետք է դա: Հու-  
սով եմ տե՛մ չէք լինի, խոտտացել եմ նրա ստիբոլը ճա-  
նապարհածախսը փճարել:

— Դե, իհարկե, Բուլգակով: Իսկ դուք մինչև  
այժմ լուռ ելիք:

— Համոզված չեյի, թե իմ բախտից, կարող  
կլինեմ հարմար մեկին գտնել, ուստի սուս ու փուս  
գործի դիմեցի: Տիմմինսի բանտից արձակված բան-  
տարկյալների ցուցակը զազանի չմնաց. մի շարք  
հայտարարություններ տավեցին եմիգրանտական հայ-  
կական թերթերում...

Կանգ չեմ առնում մանրամասնությունների վրա,  
թե վորտեղ և ինչպիսի ջանք թափեցինք խոսելու Մին-  
գիրյանի հետ: Նա տարձկահայ էր, բոլորովին ուսու-  
բեն չգիտեր և հաղիվ էր խոսում անգլերեն, իսկ մեզ  
անհրաժեշտ էր մանրամասնություններ դիտենալ: Ա-  
հա թե ինչ պատճառով Մինգիրյանը և ինչ ձևակերպեց  
Հարրըրը:



3976  
1008  
36833

Բանտային պահակը բանտարկյալներին տանում հասցնում եր այն տեղը, ուր խաչածեղի էր ճանաչարհը, շինվում եր խճուղին, և հանձնում եր տեղական վոստիկանությանը: Ո՞վ կամտածեր փախել մինչև արձակուրդը, վոր արդեն շատ մոտ եր: Մինչդեռ վոստիկաններին փոխում էին ամեն որ նորերով, վորպեսզի բանտարկյալներին հետ մոտիկ կապ չստեղծեն: Չեր փոխվում միայն սերժանտը, վոր ղեկավարում եր վոստիկանական ջոկատը: Բայց, ինչպես պատահեց, մի որ սերժանտն էլ փոխվեց: Այն ժամանակ Առաքելյանն իսկույն թողեց աշխատերը և ասաց Մինգիրյանին.

— Տես, յեթե սա յերազ չե, ապա այսոր սերժանտի փոխարեն Բեֆջյանցն է:

— Լռի՛ր, թեև իրոք դա Բեֆջյանցն է, — չչուկով պատասխանեց Մինգիրյանը — լռի՛ր, վորովհետև առանց այն էլ մենք նրա պատճառով շատ տառապանք կրեցինք:

Իսկ Գեորգ Առաքելյանը չկամեցավ լռել: Նա ուղղակի մոտեցավ սերժանտին.

— Բեֆջյանց, — ասաց նա, — դու արդեն վոստիկա՞ն ես, չարագործ: Իսկ ո՞ւր են վողերս:

Բեֆջյանցը այնպես ձևացրեց, թե իբր չի հասկանում.

— Ի՞նչ ես դուրս տալիս, — դայրացած դոչեց նա անդլերեն, — ապա՛, շուտ անցիր աշխատանքի: Յես էմ հասկանում ինչ ես ասում, անդլերեն խոսիր:

— Սպասի՛ր, դու դեռ ինձ կհասկանաս և կճանաչես. թող մի ազատվեմ, մենք դեռ կհանդիպենք ու կհասկանանք միմյանց:

Այն ժամանակ Բեֆջյանցը դադարեց չհասկացող ձևանալուց, ծիծաղեց և ասաց, արդեն հայերեն.

— Իսկ յես այնպես կանեմ, վոր դու չուտոյլ չպատվես: Գուցե քեզ շատ ե դուր դալիս այս լազերում աշխատելը:

Սրանով էլ վերջացավ խոսակցությունը: Իսկ հաջորդ սրը, յերբ արդեն աշխատանքը վերջացրել էինք և յեկավ բանտային պահակը բանտարկյալներին ընդունելու և բանտ տանելու համար, չկար այն գործիքներին մի մասը, վորոնցով աշխատում եր Առաքելյանը: Պակասում եր մի մուրճ և մի դուր:

— Գուցե՞ բանտարկյալն է դողացել այդ գործիքները, — ասաց Առաքելյանը բանտային պահակապետին: — Յես գիտեմ նույնիսկ, վոր նա այդ պետական իրերը թազցրել է այստեղ, վորչ հետու, վորպեսզի այս քանի որս դուրս դալուց հետո՝ ծախի: Չմոռանաք այդ մասին հայտնելու բանտապետին: Այ, այ, այ, — դարձավ Բեֆջյանցն Առաքելյանին, — Գեորգ, այնքան մոտ եր քո ազատության ժամը, իսկ այժմ նահանգապետը, հայտնորեն, էլի յերկու տարի կնստեցնի քեզ, քանի վոր, ինչպես յերևում է, դու անուղղելի վոճրագործ ես:

Սակայն, Բեֆջյանցի ուշադրությունից վրիպել եր, վոր Առաքելյանի ձեռին մնացել եր յերկաթե մի նիզ: Յեզվ այդ նիզով Գեորգ Առաքելյանը, պահակի աչքի առաջ, ջարդեց Բեֆջյանցի գլուխը:

— Մ—ր Հարբըր, մեր շանսերը բարձրացան:

— Հաղելի թե մեծ չափով:

— Սակայն այժմ սարդ ե. Առաքելյանը, պաշարված վիճակում, կորցրել է հոգեկան հավասարակշռու-

Բյուշեր, դրդուվել Բեֆէյանցի զազիր ծաղրից և դործել այդ արարքը :

— Հետո դրանի՞ց ինչ... փաստը մնում է փաստ. եմիզբանտ բանվորը սպանել և բրիտանական քաղաքացուն, վոստիկանական սերժանտին, վորը կատարում էր իր պաշտոնական պարտականութիւնները : Յեթե նույնիսկ մենք հաստատենք, թե Բեֆէյանցը գիտավորյալ կերպով թաղցրել է Առաքելյանի դործիքները, դեռ բավական չէ դատարարադատելին արդարացնելու համար :

— Իսկ ի՞նչ էք առաջարկում :

— Ամաչում եմ ստել : Միակ բանը, վորով կարող ենք դործել այն և, վոր հայտարարենք, թե Առաքելյանն իրօք աննորմալ է : Բայց դա այնքան միտրինակ է... Աշխարհիս յերեսին բոլոր փաստարանները հենց այդ դէնքն են մեջ բերում— պսիխոլոգ : Արևի տակ բոլոր մարդասպաններին արդարացնելու համար հոգեկան հիվանդ վիճակն են մատնանշել : Այժմ դա, կարծես, մոզայից դուրս է յեկել և հաղիվ թե վորևէ մեկը գրան լուրջ նշանակութիւն տա : Փորձենք...

Ժամանակն անցնում էր : Ձդայնանում էյի և չգիտեյի ինչ անեմ : Ժամանակն անցնում էր և այս անգամ ժամանակն արդեն փող չէր, այլ՝ խորհրդային քաղաքացու կյանք : Կյանք, վոր պարտավոր էյինք պաշտպանել : Հարբըրին չէյի հալատում, զբոնում էյի, վոր նա չի անում այն ամենը, ինչ անհրաժեշտ էր անել Առաքելյանի գործի համար : Միաժամանակ չէյի կարող նրան վորևէ խորհուրդ տալ, վորևէ կերպ ոգնել : Ձդայնանում էր և Հարբըրը : Այս գործը նրա համար դարձավ տանջանք, ամոթանք և,

վերջապես, կարչերա... Ծահել այդ գործը կնշանակեր այդ շրջանի առաջնակարգ փաստարանների շարքն անցնել : Ձդայնանում էր նաև Բուրդակովը : Նա չափազանց մեծ հույս էր դրել Մինդիրյանի, իբրև վկայի, ցուցմունքների վրա և հուսահատութեան դուռն էր հասել համոզվելով, վոր այդ ցուցմունքները քիչ են ոգնում մեզ :

Բայց մի՞թե ամեն ինչ սպասեցինք... Գուցե Մինդիրյանը դարձյա՞լ վորևէ բան գիտի, թերևս նա ամեն ինչ չասաց : Հաղիվ թե մեզնից վորևէ մեկը հալատալիս լիներ, թե Մինդիրյանը կարող է մեզ ոգնել վորևէ բանով : Ասենք, այդ միտքը մեր մեջ հղացավ մի անքուն գիշեր անցկացնելուց հետո, յերբ յերեքով մինչև լուսաբաց քննարկում էյինք գործը :

Բանի վոր մահւման դատավճիռը կատար ածելուն մնում էր մի քանի որ միայն, նորից կանչեցինք Մինդիրյանին :

— Գուք մեզ ամեն բան չեք պատմել,— այսպես սկսեցինք նրա հետ խոսակցութիւնը :

Մինդիրյանը խղճալի տեսք ընդունեց : Նա էլ էր նիհարել ու դեղնել այս ժամանակամիջոցում :

— Յես մի խեղճ մարդ եմ և բավական տուժել եմ արդեն,—ասաց նա,—մի՛խտոնեք ինձ այդ գործի մեջ : Յեթե փող ունենայի, բոլորովին կհեռանայի այս յերկրից...

— Փող կունենա՛ր :

— Բայց յես այլևս վոչինչ չգիտեմ և վոչինչ չեմ կարող ավելացնել, թեև շատ խղճում եմ Գևորգին : Բացի այդ, վախենում եմ, վորովհետև Բեֆէյանցն ինձ ասաց...

— Ուրեմն դուք Քեֆչյանցի հետ դրո՞ւյց եք ունեցել, մինչև Առաքելյանի նրան սպանելը: Իսկ ինչո՞ւ մինչև այժմ այդ մասին մեզ վոչինչ չեք ասել:

— Մայասե՛ք, սպասե՛ք, — ընդհատեց Բուրջակո—վին Հարբըրը, — ձեր ձեռքը դրեք այստեղ, — դիմեց նա Մինգիրյանին:

— Ի՞նչ եք ուզում ինձանից:

Մինգիրյանը սաստիկ վախեցավ, բայց Հարբըրն անձնատուր չեղավ:

— Ձեռքներդ դրե՛ք այս դրքին: Կրկնեցե՛ք ինչ վոր կասեմ: Այժմ դուք յերդվեցիք վկաների ներկա—յությամբ, վոր խոսակցություն էք ունեցել Քեֆչյանցի հետ: Ի՞նչ ասաց ձեզ Քեֆչյանը:

Յնս խղճում էյի Մինգիրյանին, բայց դա մեր վերջին հույսն էր և չխառնվեցի յերգման կատակեր—դությանը, վորով Հարբըրն ահարկկեց վկային: Հենց այդ կատակերգությունն էր, վոր թացեց Մինգիրյանի լեզուն:

— Քեֆչյանցը նկատեց, վոր լսեցի նրա խոսակ—ցությունն Առաքելյանի հետ և մյուս որը, աշխատանքի ժամանակ ինձ ասաց, թե ինքն Առաքելյանին բանտ կնստեցնի դարձյալ մի քանի տարի, իսկ ինձ հրա—մայեց լսել, յեթե միայն կամենում եմ ազատվել բանտարկությունից:

«Տու ի՞նչ ես կարծում, — նախադրվաչացրեց Քեֆչյանցը, — միմիայն յե՞ս եմ խառը «բանկի» սնանկանալու մեջ: Այնպիսի մեծ մարդը, ինչպիսին Մոր—գոնն է, ինձնից պակաս խառը չե այդ դործում. այն—պես վոր իմ տակը վոչ վոր չի կարող փորելը»: Այդ պատճառով էլ, վորոշեցի լսել, թեև խկապես չգի—

տեյի ով է Մորգոնը, բայց լսել էյի, թե ինչ—վոր մինիսոր է և վախեցա:

Իսկ այժմ ստիպեցիք ինձ յերգվել ու պատմել ձեզ բոլորը: Հիմի յեա ստիպված եմ փախչել այս յերկրից. յեա խեղճ, թշվառ մարդ եմ, դուք ինձ կործանեցիք:

— Մի վախենաք: Դուք վաղն ևեթ կմեկնեք Մի—ացյալ Նահանգներ, Չիկագո, և այնտեղ իմ ծանոթին կհանձնեք այն ծրարը, վոր վաղը ձեզ կտամ: Ձեր վրդան կապահովեմ, իսկ մեր հյուպատոսը ձեզ կողնի դրամով: Չիկագոյում դուք կհնաք մի տասնոր, իսկ հետո կարող եք մեկնել թեկուզ Հայաստան:

Իսկ յերբ Մինգիրյանը հեռացավ, Հարբըրը շարունակեց իր խոսքը՝ այս անգամ արդեն մեզ համար.

— Թերևս ձեզ բացատրելու կարիք չկա՞ այլևս: Մորգոնը — Փինանսների մինիստրի ոգնականն է: Մինիստրի, այն ծեր—ապուշի — Ռոգբիի, վորին պահում են միմիայն այն պատճառով, վոր նա այդպիսի ճարպիկ ոգնական ունի: Յեթե այժմ ակնարկե՞ք, թե կարելի յե լուրջ կերպով վարկարկել Փինանսների մինիստրությունը... Ծերմերների սպողիցիան հենց այդպիսի մի բանի յե սպասում:

— Ներեցեք, ինձ համար այնքան ել հասկանալի չի: Ձե՞ վոր իր ժամանակին արդեն հայտարարվել է, թե Մորգոնը մասնակից է «բանկի» սնանկանալուն. վոչ մի նոր բան չկա:

— Ի՞նչպես չեք հասկանում... Այդ դործի մասին վաղուց արդեն մոռացել են, իսկ մենք կարող ենք միայն հիշեցնել, այն ել բոլորովին նոր վարկարեկող

լուսարանությամբ, կապելով այն Տիմֆինսի վողրեր-  
գության հետ (ո՞, այժմ սա վոչ թե հասարակ սպա-  
նություն է, այլ վողրերգություն)։ Այո՛, հենց այժմ,  
յերբ պարլամենտի Փերմերական ուղղիցիան այնքան  
հուզված է նոր տարիքների հարցի պատճառով...  
Իսկ Չիկագոյի «Մոնիտոր» թերթի խմբագրությունը  
հետաքրքրությունից կակսի իր հայտնությունները։  
Ազդանշանը յես կտամ։ Իհ՛, ջննտիներ, այժմ  
կարող ենք միմյանց շնորհավորել. գործի յերեք քա-  
ւորդը արդեն շահել ենք։ Այժմ միայն ինձ թույլ  
տվեց վախճանին հասցնելու այն։

Այնուհետև հիմնական գործողությունները վա-  
րում եր ինքը, Հարրըրը։ Մենք չեյինք խառնվում։  
Նա զրույց եր ունեցել Գերագույն Դատարանի նախա-  
գահի հետ։ Նա ինքն եր նշանակել հոգեբան-գիտակ-  
ների կազմը։ Նա նույնիսկ հաջողեցրել եր տեսակ-  
ցություն ունենալ դոմինիոնի նահանգապետի հետ։

Գործը շահեցինք։



Բայց, պատահեց այնպես, ինչպես լինում է մի-  
միայն մտածին հողերանական-գեղարվեստական գրա-  
կանության մեջ։ Այսինքն՝ վոր Առաքելյանի ներման-  
հրամանը նահանգապետն ստորագրեց այն նույն օրը,  
յերբ նշանակված եր մահապատժի իրադրոծումը։ Այս  
մանրամասնությունը կջնջելի իմ հիշողությունների  
գրքից, վորովհետև շատ կեղծ է հնչում։ Սակայն  
յնջել հնարավոր չե յերկու պատճառով։ Նախ՝ այն  
չափազանց բնորոշ է այդ յերկրի սովորություններին

տեսակետից։— ստիպել մահապարտին ապրելու ան-  
խուսապիելի մահվան տառնապը, մինչև իսկ այն ժա-  
մանակ, յերբ նրա տերերը արդեն վորոշել են նվիրել  
նրան իր կյանքը։ Յերկրորդ՝ այ՛ մանրամասնու-  
թյունը քայտարում է նովելլայի վերնադիրը։

Կասկածում էյի, թե մինչև անգամ յերջին դի-  
չերն էլ Առաքելյանին չեն հայտնի ներման մասին։  
Ուստի ամեն կերպ աշխատում էյի թուլտույնություն-  
ձևոք բերել այդ բանը հաղորդելուն անձամբ մասնակ-  
ցելու համար։ Հաջողեցրի ստանալ այդ թուլտույնու-  
թյունը, նույն Հարրըրի և պարլամենտի ծանոթ պատ-  
գամավորների միջոցով։

Մուժն ընկնում եր, յերբ յես Հարրըրի հետ  
միասին, կայարանից մեկնեցի Տիմֆինսի բանտը։  
Բանտապետը մեզ դիմավորեց բանտի դռների առաջ,  
կոմսության ներկայացուցչի՝ շերիֆի հետ միասին։  
Չգիտեմ ինչու նա մեզ անմիջապես չուղեկցեց դեպի  
մահապարտների կամերան, այլ՝ պատվիրեց, վոր մեզ  
ցույց տան, թե ինչպիսի կարգ ու կանոն է տիրում  
բանտում։ Գուցե սա՞ ևս յերկրի հին սովորություն-  
ներից եր։ Վոչինչ, ասում նմ, Առաքելյանը կապա-  
սի։

Մեր տեսածից հիշում եմ միայն մի մանրամաս-  
նություն—գրադարանը։ Այնտեղ կային անգլերեն ու  
Փրանսերեն գրքեր, գեղազանցապես, իհարկե, կրո-  
նարարյադիրական, բովանդակությամբ։ Կհարցնեք,  
թե ի՞նչ հետաքրքիր բան կար այնտեղ, վոր հիշում  
եմ։

Գրադարանի մուտքից դեպի աջ կա մի դուռ, վոր-  
տանում է դեպի պատշգամբը։

— Առաքելյանն այսոր ստիպված չի լինի այս պատշգամբը դուրս դալու, — պարծանքով հառաչեց շերիֆը:

Յեվ հանդամանորեն բացատրեց մեզ, թե ինչպես և աշխատում մեխանիզմը: Նա ցույց է տալիս, թե ինչպես են ողակը գցում դատապարտյալի վիզը: Այնուհետև քաղախան և սեղմել ողակը և պատշգամբի տախտակամածը ցած է ընկնում՝ ավտոմատիկ կերպով: Ահա թե ինչու յեմ հիշում գրադարանը. նա տանում եր դեպի կախաղան:



Գրողը տանի, ջղերս բոլորովին քայքայվել են: Ահա հանկարծ բաց վանն են կամերայի դուռը. Առաքելյանը կոկոխի հիստերիկ ճչոցը և գլուխը կզարկի հատակին: Բայց գուցե նա մեզ կդիմավորի հպարտութամբ. ձեռները կծալի կրծքին ու համարձակ կզոչի:

— Տարե՛ք, յես պատրաստ եմ: Յես ճաշակեցի վրեժի քաղցրությունը և չեմ վախենում մահից:

Առաջին բանը, վոր զարմացրեց ինձ կամերայում, դա—մոխրագույն, անտանելի միապաղաղ գորշ տեսքն էր: Նրանկտրականությունն ու յո՛ւններ վերացնելու այն, նրա անոգնական ճառագայթները դեղնավուն էլին դարձնում գորշ շրջապատը, կամերայի խորքում անշարժ նստած եր մի մարմին, իր ստուած հայացքը մեխած մի կետի, ուր ուղղանկյուն էլին կազմում պատերը: Թերևս այն պատճառով, վոր դա միակ կետն էր, վորին դեմ եր առնում հարթ տարբ-

ծությունը: Մյուս անկյունները բռնել էլին մահճակալը, հագուստները և այլն:

Յերր ներս մտանք, մարմինը չարժվեց: Շերիֆը կանչեց. — Գեորգ Առաքելյան:

Յեթե դեմքը հաղիվ նկատելի կերպով չդառնար դեպի մեզ, յես կկարծեյի, թե Առաքելյանը մեռել է, ներման չափասելով: Բայց և այդ շարժումը քաղախան չեր, վորպեսզի կարողանայինք դիտել նրա դիմագծերը: Ստվերը ծածկում եր նրա դեմքը, այն դարձնելով միապաղաղ բիծ, վորը համարյա չեր տարբերվում գորշ շրջապատից:

— Գիտե՞ս, Առաքելյան, ինչու յենք յեկել:

Այժմ յես ջանք եմ թափում, վորպեսզի ստիպեմ ինձ հավատալու, թե Առաքելյանն, իրոք, պատասխանում եր շերիֆին: Մինչդեռ, Առաքելյանն իրոք պատասխանում եր. հիշում եմ ամբողջ խոսակցությունը:

— Չգիտեմ, գուցե նրա համար, վոր ինձ կասե՞ք:

Կարո՞ղ եք յերևակայել, ձայն՝ առանց վորևե յերևելի, ձայն, վոր նվաստացնում և մարդկային լեզվի իմաստավորությունը: Մի անդամ եմ լսել այդ ձայնը, ձայն, վորը վերհիշելիս մինչև այժմ ել փառքաղվում եմ, թեև անցել են տարիներ, անթիվ նորանոր տպավորություններ եմ ստացել, հիշողությունիցս թռել և այդ դեմոկրատական յերկիրն իր մեքե- նայացման յենթարկված կախաղաններով:

Շերիֆը, հավանորեն, ձգտում եր վորքան կարելի յե ավելի եֆֆեկտով հաղորդել մահապարտին՝



Նրան կյանք շնորհելու լուրը: Նա մեծ հրճվանքով ա-  
սաց.

— Վո՛չ, Առաքելյան, յեկել ենք քեզ յերջանիկ  
յուր հաղորդելու. նահանգապետը քեզ կյանք է շնոր-  
հում:

Վոչ մի շարժում: Յեվ դարձյալ նույն-նվազած  
ինտոնացիայով-- թույլ ձայնը պարասխանեց.

— Շնորհակալ եմ, միտքը:

Յեվ անկյունից չհեռացրեց իր տեսողությունից  
դուրկ աչքերը:

Այն ժամանակ յես հասկացա, վոր վերջին յեր-  
կու ամսյա մեր ջանքերն անտեղի յեն անցել: Մենք  
պարտություն կրեցինք:

Մեր առաջ մի մեռած մարդ էր. այդ մեռելին մենք  
նորոգում էինք կյանքի կոչել. իսկ այդ, ինչպես հայտ-  
նի յե, անհուսալի բան է:

\*\*\*

Ձեզ հետաքրքրում է Գևորգ Առաքելյանի հետագա  
վիճակը... Ահալասիկ համառոտ: Բանտից նրան տե-  
ղափոխեցին հողեկան հիվանդների հիվանդանոցը:  
Այնտեղ նա մեռավ մի քանի շաբաթից:

Ինձ համար այժմ ծանր է հիշել այն լատիներեն  
անունը, վորով բժիշկները վորոչեւ էյին Առաքելյա-  
նի հիվանդությունը--ապատիա:



« Ազգային գրադարան



NL0329325

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

Գրքիչ

3



И. КУЛИК

ПОРАЖЕНИЕ

Гиз ССР Армении, Эривань, 1935 г.